

10,327

ՉԵՌԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆԳՈՎ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ



9(47.925)

Z-24

ՀԻՍՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A P M

3-4364a

31 AUG 2007

ՁԵՆՈՒԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

9(47-925)

Z-24

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

**ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ**



15879

Թուլլատրվում է ոգտադործելու,  
վորպես նախագիծ Հայկ. ԽՍՀ-ի  
Լուսժողկոմատի Բուհերի Կար-  
չության կողմից

270-87

Կազմեց Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Պատ. խմբագիր՝ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ  
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉՍՏԻՅԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գրավիտի լիազար՝ Տ—9567 Պատվեր № 147, Տիրած 1500  
Հանձնված է արտադրության 27 ապրիլի 1938 թ.  
Ստորագրված է տպագրելու 7 մայիսի 1938 թ.

Ոստեղիչների Վորակավորման Ինտիտուտի տպագրության  
Յերեվան, Մաքբոի փողոց № 17

## ՀԻՆ ԳԱՐ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընկերներ Ստալինի, Կիրովի, Ժդանովի ղեկավարությամբ պատմության հարցերի մասին: Հայ ժողովրդի պատմության ֆալսիֆիկացիայի՝ սպեցիֆիկյան, բուրժուական նացիոնալիստական պատմագրության քննադատությունն ու հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության բնագավառում մեր առաջ դրված խնդիրները:

Սկզբնաղբյուրները—մատենագրություն (հին հունական, ասորական, լատինական, հայկական, արաբական, վրացական և այլն), արձանագրություններ (սեպագիր, վիմագիր), նյութական կուլտուրայի մնացորդներ, ազգագրություն, լեզվաբանություն: Հայաստանի աշխարհագրական դիրքը և կապը հարևան յերկրների հետ:

### Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԲՆԻԿՆԵՐԸ

Հայաստանի հնագույն բնակիչները՝ սուրարիներ, խաբի մետոնիներ և նայիրցիներ (չուրջ 3000—900 թ.թ. մեր տարեգրությունից առաջ): Սրանց՝ բնակավայրերը, զբաղմունքը, հասարակական-տնտեսական կառուցվածքն ըստ սեպագիր արձանագրությունների և նյութական կուլտուրայի մնացորդների: Ասորիստանի արշավանքները նայիրյան ժողովուրդների վրա: Տոհմական կարգերի քայքայումը նայիրյան ժողովուրդների մոտ, դասակարգերի ձևավորումը այդ ժողովուրդների մոտ և պետության կազմավորումը:

Սալգ-ուրարտական պետությունը (885—585 թ. թ.)—ձևավորումը Բիայնայում: Ասորիստանի և խալդ-ուրարտական պետության պատերազմները: Ասորիստանի թուլացումն ու խալդ-ուրար-

տական պետութեան հզորացումը 8-րդ դարում: Մենուաս Ա-ի (805—780 թ.) Արդիշտի Ա-ի (780—755 թ.) Սարգուրի Բ-ի (755—736) և Ռուսաս Ա-ի (736—714) նվաճումները (800—714) և Հայկական բարձրավանդակի հիմնական մասերի ընդգրկումը խալդ-ուրարտական պետութեան սահմաններում: Արմավիր քաղաքի հիմնադրումը Արարատյան դաշտում: Նվաճվող ժողովրդի գերեզմանները ու ստրկացումը:

Տնտեսական կյանքը խալդ-ուրարտական պետութեան ժամանակ.— գյուղատնտեսութեան և արհեստների զարգացումը. ջրանցքաշինարարութեան զարգացումը, սրա նշանակութունն այգեգործութեան, պտղաբուծութեան և հացահատիկների մշակման համար: Արհեստներն ու նրանց տեսակները՝ յերկաթագործութուն, վոսկերչութուն, գինագործութուն, քարափորութուն, բրուտագործութուն և այլն: Արհեստն ու վաճառականութունը: Դասակարգերն ու դասակարգային փոխհարաբերութունները խալդ-ուրարտական պետութեան մեջ: Ռազմիկների և քրմերի դասակարգը վորպես տիրող և շահագործող դասակարգ. ստրուկներն ու գյուղացիութունը վորպես շահագործվող դասակարգեր: Պետութեան միապետական բնույթը:

Խալդ-ուրարտական կուլտուրան.— խալդական սեպագրութունը: Այդ սեպագիր արձանագրութունների արժեքն ու նշանակութունը Մերձավոր Արևելքի վաղ անցյալի պատմութեան ուսումնասիրութեան համար: Շինարարական արվեստի զարգացումը ու քանդակագործութունը:

Խաղերի կրոնը, խալդական աստվածները, Խալդ աստվածները աստվածների հայր, ջրի պաշտամունքը:

Հին Արևելքի կուլտուրայի ազդեցութունը խալդական կուլտուրայի վրա: Խալդ-ուրարտական կուլտուրայի նշանակութունը հետագայում հայկական կուլտուրայի զարգացման համար:

Խալդ-ուրարտական պետութեան տկարացումն ու անկումը (585 թ.) և անկման պատճառները:

## Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԱՅՈՒՍԸ (6-ԻՑ 2-ՐԴ ԴԱՐԵՐ)

1. Հայկական բարձրավանդակի բնակիչները Ա. քեմենյան Իրանի գերիշխանութեան ներքո (550—330 թ. թ.)— Խալդ-ուրարտական պետութեան նվաճումը մեղացի-

ների կողմից: Արմենների ապարեզ գալը: Պարսկաստանում Ա. քեմենյան պետութեան հաստատումը Կյուրոսի ժամանակ (558—529) և մեդական իշխանութեան տապալումը: Հայկական բարձրավանդակի բնակիչները աքեմենյան Պարսկաստանի գերիշխանութեան ներքո: Արմեններն ու Արմենիան ըստ Հերոդոտի: Արմենների բնակչության վայրերը. արմենների և խալդերի միջև թշնամական փոխհարաբերութունների վերացումն ու այդ ցեղերի աստիճանաբար մերձեցումը:

Արմենների ապստամբութունն աքեմենյան Պարսկաստանի տիրապետութեան դեմ: Ապստամբութեան ճնշումը և Բիհիստունի արձանագրութեան արմենների մասը, այդ արձանագրութունը վորպես առաջին հաստատուն տեղեկութուն արմենների մասին:

Ա. քեմենյան պետութեան մեջ Դարեհ Ա-ի (522—484) անցկացրած բարենորոգումները և նրանց նշանակութունը Հայկական բարձրավանդակի բնակիչների մեջ դասակարգային նոր հարաբերութունների խորացման և տնտեսական կյանքի զարգացման համար— Հայկական բարձրավանդակը վորպես 13 և 18-րդ սատրապութուններ, համեմատաբար խաղաղ և ապահով դրութուն. ճանապարհների կանոնավորումը, արքայական պողոտայի անցկացումը, փոխանակութեան ուժեղացումը, դրամի կտրումը:

Հայկական բարձրավանդակը Քսենոֆոնդի և հույն զորքերի նահանջի ժամանակ (401—400 թ. թ.). հույն զորքերի նահանջի ճանապարհն Արմենիայի վրայով: Արմենների անտեսական և դասակարգային կառուցվածքն ըստ Քսենոֆոնդի: Հայկական բարձրավանդակի գյուղի նկարագրութունը Քսենոֆոնդի մոտ: Փոփոխութունները Հայկական բարձրավանդակում 6—4-րդ դարերում: Մասնավոր սեփականատիրական հարաբերութունների խորացումը և տոհմական կարգերի վերջնական քայքայումն Արմենների մոտ: Հայկական բարձրավանդակի ցեղախմբերի շփոթն ու խաչաձևումը և հայ ժողովրդի աստիճանական ձևավորումը: Իրանի կուլտուրայի, լեզվի և կրոնի ազդեցութունը նոր ձևավորվող հայերի վրա:

2. Հայաստանը Մեկեղյան տիրապետութեան ներքո (330—189).— Հունաստանի միացումը Մակեդոնացի և Ալեքսանդր Մեծի (336—323 թ. թ.) արշավանքները (334—326) և

Աքումենյան աշխարհակալության նվաճումը: Մակեդոնական աշխարհակալությունը Մակեդոնացու մահից (323) հետո, պետության բաժանումը յերեք մասի՝ Մակեդոնիան և Հունաստանը, Տեգեսպոսը և Սելեվկյան իշխանությունը: Հելենիստական կուլտուրայի առաջացումը վորպես հունական և արևելյան կուլտուրայի սինթեզը:

Հայաստանի նվաճումը Մակեդոնացու կողմից, այդ նվաճման անբաղնիքումը Սելեվկյան պետության կողմից: Հայկական բարձրագույնագույն հելենիստական քաղաքակրթության շրջանում, փոխանակության, առևարի աշխուժացումը, քաղաքների հիմնումը, զբաղման շրջանառության աշխուժացումը: Հայկական բարձրագույնագույն ընակչության շրջան ուժեղացումը և հայ ժողովրդի վերջնական ձևավորումը Հայկական բարձրագույնագույն:

Մեծ Հայքն ու Մոփքը Սելեվկյան տիրապետության շրջանում: Սելեվկյան պետության ասիականական քայքայումը: Պարթևների զինուորային հիմնումն Իրանում (250): Հռոմի աշխարհակալության ծավալումը: Հունաստանի զբաղումը հռոմեացիների կողմից, հռոմեական բանակները Փոքր Ասիայում, Մագնեզիայի ճակատամարտը (190), այդ ճակատամարտը վորպես առիթ հայերի և պոնտացիների ապստամբությանը Սելեվկյան իշխանության դեմ: Հայկական յերկու թագավորությունների հիմնումը Հայաստանում և հայերի ազատվելը սելեվկյան տիրապետությունից:

Հայ ժողովրդի ծագման մասին յեղած բուրժուական ուսասայական տեսակետների քննադատությունը:

### Գ. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ (189—1)

Արտաշես Ա-ի (189—161) և Զարեհի (189—163) թագավորությունները Հայաստանում: Արտաշատ մայրաքաղաքի կառուցումն Արարատյան դաշտում: Արտաշեսի և Զարեհի նվաճումները: Արտաշեսյան հարստության փորձերը Հայաստանում մի պետություն ստեղծելու համար:

Հայաստանը Տիգրան Բ-ի ժամանակ (95—55): Առաջավոր Ասիայի քաղաքական կացությունը 2-րդ դարի վերջում և առաջին դարի սկզբում: Պոնտոսի պետությունը և նրա հզորացումը

Միհրդատ 6-րդի ժամանակ (128—63): Փոքր Հայքի միացումը Պոնտոսին (112): Միհրդատի և Տիգրան Բ-ի դաշինքը (94): Այդ դաշինքը վորպես յերկու պետությունների միացյալ պայքարն ընդդեմ ստրկատիրական Հռոմի: Մոփսք թագավորության միացումը Մեծ Հայքին (93) և Հայաստանի միավորումը հայկական մի պետության մեջ: Արտաշեսյան հարստության ամրացումը:

Հռոմեական հանրապետության և Պարթևական Իրանի ներքին ծանր դրությունը, այդ յերկրների ներքին ծանր կացությունը վորպես նպաստավոր պայման Հայաստանի և Պոնտոսի նվաճումների համար: Միհրդատ Պոնտացու և Տիգրանի նվաճումների սկիզբը.— կռիվները Կապադովկիայում: Սուլլայի արշավանքը (92), առաջին Միհրդատյան պատերազմը (92—84): Հեղափոխությունը Փոքր Ասիայում և Հունաստանում: Այդ հեղափոխությունների ռզտագործումը Միհրդատի և Տիգրանի կողմից: Միհրդատի և Տիգրանի նվաճումները Հռոմին և Պարթևներին յենթակա տերիտորիաներում: Տիգրան Բ-ի հետագա նվաճումները Հայաստանի հարավ-արևմտյան մասերում: Տիգրան Բ-ի միջոցառումները պետության ամրապնդման համար, բղերխությունները Հայաստանում: Բանակը և նրա կազմակերպվածությունը: Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնումը Հայաստանի հարավում: Տիգրանակերտը վոչ միայն վարչական, այլ և տնտեսական կենտրոն: Գաղթականների ներմուծումը Հայաստան՝ Հյուսիսասիան Միջագետքից, Կապադովկիայից և Միջերկրականի ծովափնյա քաղաքներից: Տիգրանի վարած քաղաքականությունը նվաճած յերկրների և Հայաստան բերված գաղթականների հանդեպ:

Միհրդատյան 2-րդ պատերազմը (72—68).— Լուկուլլոսի հաղթությունները Փոքր Ասիայում և Պոնտոսում: Նրա արշավանքը դեպի Հայաստան, առաջին ընդհարումները, Տիգրանի բանակի պարտությունը, Տիգրանակերտի ապստամբությունը: Լուկուլլոսի անհաճող արշավանքը դեպի Արտաշատ մայրաքաղաքը: Անհաջողության պատճառները: Միհրդատ Պոնտացին նորից զբաղում է Պոնտոսը, իսկ Տիգրանը՝ Կապադովկիան: Լուկուլլոսի բանակի վերջնական պարտությունը:

Մարուհների ապստամբության և քաղաքացիական կռիվ-

ների աստիճանական թուլացումը Հռոմում. Պոմպեոսի արշա-  
վանքը և 3-րդ Միհրդատյան պատերազմը (67—63): Ներքին  
յերկպարակությունները Հայաստանում և Պոնտոսում: Հայ-պոն-  
տական դաշինքի թուլացումը: Պարթևների արշավանքը դեպի  
Հայաստան.— Պարթև-հռոմեյական դաշինքն ընդդեմ Հայաս-  
տանի և Պոնտոսի: Միհրդատ Պոնտացու պարտությունը և փա-  
խուստը: Տիգրան Բ-ի հաշտությունը Պոմպեոսի հետ (65):  
Արտաշեսյան պետության տերիտորիալ անդամահատումը, Հա-  
յաստանի հզորության թուլացումը: Տիգրան Բ-ի մահը (55):

Հայաստանն առաջին դարի յերկրորդ կեսին մ. տ. առաջ—  
Արտավազդ Բ-ի (55—33) ձգտումները 65 թվի դաշնագրու-  
թյունը չեղյալ հայտարարելու համար: Կրասոսի անհաջող ար-  
շավանքն Արևելքում: Հայաստանի դաշնակցությունն Իրանի հետ:  
Կրասոսի պարտությունը և 65 թվի դաշնագրության չեղյալ հայ-  
տարարումն Արտավազդի կողմից: Արտավազդի փորձերը վերա-  
կանգնելու Հայաստանի նախկին հզորությունը: Պարթևների ար-  
շավանքներն Ասորիքում Հայաստանի մասնակցությամբ, հրեա-  
ների դադթեցումը Հայաստան (40):

Անտոնիոսի արշավանքը և Հայաստանի նվաճումը, Արտա-  
վազդ Բ-ի ձեռքակալվումը Անտոնիոսի կողմից (33): Հայաստան  
հռոմեյական ազդեցության սֆերը: Ապստամբությունը Հայաստա-  
նում Հռոմի դեմ, հռոմեյական զորքերի դուրս քշումը Հայաս-  
տանից: Արտաշես Բ. (33—20) յեվ նրա հաջորդները (Տիգ-  
րան Գ. 20—4, Տիգրան Գ. և Յերազո 4—1): Հռոմեյական  
կայսրության քաղաքականությունը Հայաստանը պրովինցիայի  
վերածելու: Արտաշեսյան հարստության թուլացումն ու անկումը  
մեր տարեգրության սկզբին և անկման պատճառները:

Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունն Արտաշեսյան  
հարստության ժամանակաշրջանում: Ռազմական և քրմական  
դասերը վորպես յերկրի շահագործող և տիրապետող դասակարգ:  
Գյուղացիությունը ու նրա ստրկական վիճակը: Ստրուկները և  
ստրկատիրությունը: Ռենտայի և պետական հարկի միացյալ  
գանձումը գյուղացիներից վորպես պետական պարտավորություն:  
Առևտուրը և արհեստագործությունը, քաղաքները (Արտաշատ,  
Տիգրանակերտ, Արշամոզատ): Քաղաքների բնույթը և նրանց  
միջազգային առևտրական նշանակությունը: Արևելքի և արև-

մուտքի արանդիտային առևտրական ճանապարհը Հայաստանի  
վրայով: Հայաստանից արտահանվող և Հայաստան ներմուծվող  
ապրանքները:

Հունա-հռոմեյական կուլտուրայի ազդեցությունը հայերի  
վրա: Արտավազդ Բ. վորպես դրամատուրգ:

## Գ. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (66-429)

### 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՐՍՈՒՄ

Հայաստանը վորպես պատերազմների թատերաբեմ Հռոմի  
և Իրանի միջև: Հայաստանի տնտեսական ու ռազմատարատե-  
գիական դիրքի նշանակությունը հարևան յերկրների համար:  
Հարևան պետությունների ջանքերը Հայաստանը գրավելու  
իրենց կողմը: Հայաստանի մշտական մասնակցությունն այդ պե-  
տությունների կռիվներին. յերկրի պարբերական ավերումը:

Հայաստանը Հռոմի ազդեցության ներքո. Պարթևների մի-  
ջամտությունները Հայաստանի ներքին գործերին: Հռոմի և  
Իրանի կռիվները Հայաստանի և Մերձավոր Արևելքի շուրջը  
(1—63) և հիսուսամյա խառն շրջանը: Իրանի ուժեղացումը Վա-  
ղարշ Ա-ի ժամանակ և նրա միջամտությունը Հայաստանի գոր-  
ծերին: Տրդատ զորավարը Հայաստանում և հայերի ապստամ-  
բությունը հռոմեյացիների դեմ, այդ ապստամբության ողոր-  
գործումը Տրդատի կողմից:

Կորբուլոնի և Պետոսի արշավանքները (58—63): Կորբու-  
լոնի արշավանքը (59—60) և Արտաշատ մայրաքաղաքի ավե-  
րումը. Տրդատ զորավարի վերադարձը Հայաստան և հայերի  
նոր ապստամբությունը Հռոմի ու Տիգրան Զ-ի (60—61) դեմ:  
Պետոսի արշավանքը (61—62) և պարտությունը: Կորբուլոնի  
նոր արշավանքը և յերեք դաշնագրությունները (61, 62 և 63 թթ.):  
63 թվի Ռանդյայի դաշնագրությունը վորպես կոմպրոմիս Հռո-  
մի և Իրանի միջև Հայաստանի շուրջը: Հայաստանի ազատա-  
գրումը Հռոմի և Պարսկաստանի գերիշխանություններից: Տրդատի  
մեկնումը Հռոմ և վերադարձը Հայաստան (65—66): Արշակուն-  
յաց հարստության հիմնումը Հայաստանում (66 թ.). Հայաստանի  
քաղաքական իշխանության վերականգնումը:

## 2. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹՄԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ

Տրդատ Ա-ը (63—100) և արշակունիների ջանքերը Հայաստանի պետականության ամրացման համար: Արտաշատ մայրաքաղաքի վերաշինումը: Տնտեսական կյանքի զարգացումը, քաղաքները, արհեստները և առևտուրը առաջին դարի 2-րդ կեսին: Հյուսիսային ցեղերի (Ալանների) արշավանքը դեպի Հայաստան (72): Հռոմի նվաճողական քաղաքականութունն Արևելքում և Հայաստանը պրովինցիա դարձնելու ձգտումները յերկրորդ դարում և յերրորդ դարի առաջին քառորդին (114—117, 161—164, 211—217): Հայաստանի դիմադրությունը Հռոմին և վերջինի անհաջողությունը: Կարակալայի արշավանքներն Արևելքում, Հայաստանը նվաճելու նրա փորձերը և Հայաստանի դիմադրությունը, Հռոմեական կայսրության անհաջողությունը, Հռոմեական զորքերի դուրս վանումը Հայաստանից, ապստամբություն Հռոմեական բանակում Կարակալայի սպանությունը: Տրդատ Բ. (217—222) և Արշակունիների թագավորության վերականգնումը:

Իրանում Պարթևական դինաստիայի անկումն ու Սասանյանների տիրապետության հաստատումը (226): Սասանյան Իրանի քաղաքական, վարչական և կուլտուրական առանձնահատկությունները, պետության միապետական բնույթը: Իրանի նոր դինաստիայի ներքին և արտաքին քաղաքականությունը: Սասանյանների նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ: Հայաստանի դիրքը Սասանյան Պարսկաստանի նկատմամբ: Արտաշիրի (226—342) և Շապուհի (242—272) արշավանքները դեպի Հայաստան, վերջինիս դիմադրությունը: Հայաստանի գրավումը Սասանյանների կողմից (251): Հայաստանը Սասանյան իշխանության ներքո (251—297):

Իրանահռոմեական պետությունների կռիվները 3-րդ դարում: Հայաստանի դիրքն այդ կռիվների ժամանակ: Հռոմեական կայսրության վիճակը 3-րդ դարում և 4-րդ դարի սկզբում, ստրուկների հեղափոխությունը: Իրանահռոմեական պատերազմները 3-րդ դարի վերջում (387—397): Իրոկղեոսիանոս կայսրի հաշտությունը (297 թ.) Պարսկաստանի հետ: Հայաստանի ապստամբությունը Սասանյան Իրանի դեմ, Տրդատ Գ. (297—330) և հայ Արշակունիների հարստության վերահաստատումը Հայաստանում:

## 3. ՖԵՈՂԱՎԻԶՄԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փեոդալական հասարակարգի վերջնական հաստատումը Հայաստանում 3—4-րդ դարերում, Ֆեոդո հիմնական դասակարգերը՝ ֆեոդալ-նախարարները և ճորտ գյուղացիները կամ թե՛ «ազատներ» ու «անազատները»: Հայաստանի ֆեոդալական-նախարարական կազմակերպության ընդհանուր բնույթն ու առանձնահատկությունները, նախարարությունների պարտավորություններն Արշակունյաց թագավորների հանդեպ, նախարարությունների իրավունքների ժառանգական բնույթը: Հայ նախարարների և Արշակունիների փոխհարաբերություններն իբրև վասալի և սուվերենի փոխհարաբերություն: Արշակունիների պայքարը կենտրոնախույզ նախարարների դեմ:

Հոգն իբրև ֆեոդալական սեփականություն իր յերեք ինստիտուտներով՝ 1. ֆեոդալական կամ նախարարական, 2. յեկեղեցական կամ հոգևորական և 3. արքունի կամ պետական: Հոգի պայմանական սեփականությունը 4-րդ դարում: «Ի սպասի ծառայություն», «խոստակ» (ֆեոդ): «Երկիրք հայրենականք», «Երկիրք պարզեվականք» և «Երկիրք քսակագինք» իբրև հոգի ֆեոդալական սեփականության առաջացման յեղանակները: «Կյանք», «Արար», «Կավածք», «Վիճակ», «Աշխարհ», «Երկիրք» տերմինների սոցիալական նշանակությունը: Ռամիկների (շինականներ ու քաղաքի բնակչություն) պարտավորությունները— «Ի հարկի ծառայություն»: Գյուղացիության շահագործման յեղանակը և չափը: Արտադրույթի ոենտան իբրև շահագործման հիմնական ձև: Ջրի պարտագիր աշխատանք: Գյուղացիության իրավաքաղաքական վիճակը: Ստրուկներ:

Առևտուրն ու արվեստները և քաղաքները (Արտաշատ, Վաղարշապատ, Ֆերվանդաշատ, Վաղարշավան, Ջսրեշատ) Արշակունիների ժամանակաշրջանում: Քաղաքների բնույթը: Արտաշատ ու Վաղարշապատ քաղաքների դերը միջազգային առևտրի մեջ: Միջազգային առևտրի դերը քաղաքների զարգացման վրա, ներքին առևտրի վիճակը: Արհեստներն ու նրանց տեսակները, արհեստավորների իրավաքաղաքական դրությունը:

Փեոդալական հասարակարգի հիմքը՝ խոշոր հողատիրություն և մանր արտադրություն: Ֆեոդալ տնտեսության նատուրալ բնույթը:

4. ԿՈՒՆՏՈՒՐԱ

Կ ու լ տ ու ը ր ա . — Հայաստանի նախաքրիստոնեական շրջանի կուլտուրան: Գողթան յերգիչներն ու յերգերը, գուսանական խրմբերը, պարարվեստը, կիթառի, տավիղի, սրնգի գործածությունը: Թատրոն ու յերաժշտություն: Ճարտարապետական արվեստը, Գառնիի հեթանոսական տաճարը: Բանավոր գրականություն, ժողովեպոս: Գրեթե գործածություն հարցը Արտաշեսյան ու Արշակունյաց հարստությունների ժամանակ:

Կ ր ո ն . — Ա . Հ ե թ ա ն ո ս ա կ ա ն կ ր ո ն . — հայկական պանթեոնը, Աստվածություններ ու նրանց պաշտամունքը: Հելենիստական կուլտուրայի հետ հունական աստվածությունների պաշտամունքի տարածումը Հայաստանում: Իրանական կրոնական հայացքները — զրադաշտականություն — աղեցյությունը հայկական հեթանոսական կրոնի վրա, Արամազդ, Անահիտ, Միհր և այլ աստվածները:

Մեհյաններն ու տաճարները, քրմերի դասը, մեհյանական հարստությունները:

Բ . Քրիստոնեությունը . — Քրիստոնեությունից ծագումն ու զարգացումը: Նրա զարգացման եվոլյուցիան, քրիստոնեությունից պետական կրոն դառնալը Կայսրությունից մեջ 313 թ. Միլանի հրովարտակից հետո:

Քրիստոնեությունից մուտքը Հայաստան, քրիստոնյա քարոզիչները մուտքը Հայաստան 2—3-րդ դարերում: Գրիգոր Լուսավորիչի և Տրդատ Թագավորի եպոսի պատմությունը Հայաստանում քրիստոնեությունից տարածման պատմությունից մեջ: Քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելը Հայաստանում 4-րդ դարի առաջին քառորդին: Հայաստանում քրիստոնեությունից պետական կրոն հայտարարելու սոցիալական և քաղաքական շարժառիթները: Քրիստոնեությունը Հայաստանում հաղթանակեց Վրդպես Ֆեոդալական իգեոլոգիա:

Քրիստոնեական կրոնի պայքարը հեթանոսական կրոնի դեմ: Տարոնի պատերազմը — վեպ: Հեթանոսական կրոնի վրոշ տարրերի մուտքը քրիստոնեությունից մեջ: Վանքերի հիմնումը և քրիստոնեությունից տարածումը: Յեկեղեցին մեհյանական հարստության ժառանգ: Յեկեղեցին վրդպես Ֆեոդալ-կալվածատեր: Բուրժուա

կան պատմագրության տեղեկանքից մոտեցումը քրիստոնեությունից ընդունման խնդրում և նրա քննադատությունը: Քրիստոնեությունից ունեցած դրական դերը: Վանքերն ու յեկեղեցիները, վրդպես վաղ միջնադարի գրի ու գրականության զարգացման և պահպանման կենտրոններ:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

Մասանյան Իրանի վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Խոսրով Բ. (330—339) և նրա կատարած ձեռնարկումները: Շապուհի արշավանքները դեպի հռոմեական պրովինցիաները և Հայաստանը: Խոսրով Բ-ի և Տիրանի (339—350) դիմադրությունները: Յեկեղեցի կենտրոնախույզ ուժերի ուժեղացումը: Այդ ուժերի ոգտագործումն արտաքին պետությունների կողմից: Գյուղացիության դեգրադացիաները հոգեվոր ֆեոդալների դեմ, Վրթանեսի սպանությունը:

Արշակունյաց պետության ներքին հակասությունները, կենտրոնաձիգ պետության և կենտրոնախույզ ուժերի պայքարը, պայքարի սոցիալ-քաղաքական հիմքերը: Յեկեղեցին վրդպես կենտրոնախույզ ուժերի կազմակերպիչ: Տիրանի, Արշակի (350—368) և Պապի (368—374) վարած քաղաքականությունը կենտրոնաձիգ պետություն ստեղծելու համար: Ներսես կաթողիկոսը (352—372), Աշտիշատի ժողովը, յեկեղեցական կանոնների մշակումը: Յեկեղեցու աղեցյությունից աստիճանական ուժեղացումը: Արշակ Բ. և նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Դասակարգային պայքարի սրումը Արշակ Բ-ի ժամանակ: Արշակավան քաղաքի հիմնումը, հիմնման պատճառները: Արշակավանում ապաստանող բնակիչների և նախարարների միջև յեղած կռիվը վրդպես դասակարգային պայքարի արտահայտություն:

Իրանահռոմեական պատերազմները (358—363) Հյուսիսային Միջագետքի և Հայաստանի շուրջը: Արշակունի պետությունից դիրքն այդ պատերազմների ժամանակ: 363 թ. կնքած դաշնագրությունը, դաշնագրության բացասական նշանակությունը Հայաստանի համար:

Շապուհի արշավանքները դեպի Հայաստան, վերջինիս հա-  
մառ դիմադրութիւնը: Հայաստանի պարտութիւնը և յերկրի  
ավերումը պարսիկների կողմից: Պապը և նրա հաղթական կռիւ-  
ները: Յերկրի ազգաբնակչության լայն ոժանդակութիւնը Պա-  
պին ընդդէմ Սասանյաններին և տեղական ֆեոդալներին: Պապի  
վարած ներքին և արտաքին քաղաքականութիւնը: Պապի ու-  
ֆորմները յեկեղեցու նկատմամբ: Պապի սպանութիւնը: Ներ-  
քին հակասութիւնների սրման ուժեղացումը: Վարազդատ (374-  
377) և նրա պայքարը Մամիկոնյանների ու յեկեղեցիների դեմ:  
Արտաքին ուժերի նոր դասավորումը 380-ական թվականներին:  
Արշակունիների պետութիւնի թուլացումը: 387 թվի Տիգրանի  
դաշնագրութիւնը և Հայաստանի առաջին բաժանումը Իրանի և  
Հռոմի միջև:

## ՄԻՋԻՆ ԳԱՐ

Վ ա ղ մ ի ջ ն ա դ ար (5—11-րդ դարեր) Ֆ ե ո գ ա լ ի դ մ ի  
դ ար գ ա ց մ ան դ ար ա շ ր ջ ա ն

### Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՆԻ ՅԵՎ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ԳԵՐԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (5—7 դ. դ.)

#### 1) ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հռոմեական կայսրութիւնի քայքայումն ու բաժանումը յեր-  
կու մասի 4-րդ դարի վերջում: Բյուզանդական կայսրութիւնի  
հիմնումը: Այդ կայսրութիւնի քաղաքական, տնտեսական ու կուլ-  
տուրական առանձնահատկութիւնները: Կոլոնատի և պատրոնա-  
տի զարգացումը:

Հայաստանի քաղաքական կացութիւնը 387 թ. բաժանու-  
մից հետո, Արշակունի թագավորութիւնի վերացումը Արևմտյան  
Հայաստանում: Արևմտյան Հայաստանը Բյուզանդական կայսրու-  
թիւնի մի նահանգ:

Արևելյան Հայաստանի քաղաքական և տնտեսական դրու-  
թիւնը 4-րդ դարի վերջին. առևտրի ու քաղաքների անկումը:  
Այդ անկումը վորպես հետևանք Շապուհի կատարած ավերում-  
ների: Վառաշապուհը (391—415) և Սասանյան Իրանի վարած

մեղմ քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ: Այդ վա-  
րած մեղմ քաղաքականութիւնի պատճառները:

Հայերեն գրերի ստեղծումը (404—412) և Մեսրոպ Մաշ-  
տոցը: Հայերեն գրերի ստեղծման նախադրյալները: Բրիտոն-  
նեութիւնի տարածումը վորպես գրերի ստեղծման նախադրյալ-  
ներից մեկը: Հայերեն գրերի ստեղծման խոշոր նշանակութիւնը  
հայկական կուլտուրայի զարգացման համար: Հայաստանի հնա-  
գույն վանքերի, յեկեղեցիների կարևոր դերը հայկական կուլ-  
տուրայի ստեղծման ու պահպանման գործում:

Մոշոր հողային սեփականութիւնի աճումը և զարգացումը:  
Մոշոր հողատերերի (նախարարական տների ու վանքերի) գերիշ-  
խանութիւնը: Ճորտային հարաբերութիւնների խորացումն ու  
զարգացումը: Շահագործման ուժեղացումը:

Դասակարգային պայքարի սրումը 5-րդ դարի առաջին  
քառորդում: Բորբորիտոնների շարժումը: Այդ շարժման սոցիալ-  
տնտեսական նախադրյալները: Բորբորիտոնների առաջադրած  
խնդիրները: Շարժման ընթացքը և Բյուզանդիոնի դերը շարժման  
ճնշման գործում: Արշակունիների թագավորութիւնի դրութիւնը  
5-րդ դարի 20-ական թվականներին.—Սասանյանների դիրքը:  
Արշակունիների թագավորութիւնի վերացումը Հայաստանում (429)  
և վերացման պատճառները:

#### 2. ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (429—640)

Հայաստանի ապստամբութիւնները Իրանի դեմ  
5-րդ դարում

Հայաստանը վորպես մարզպանութիւն: Պարսիկ մարզ-  
պանները Հայաստանում: Նրանց պարտականութիւնները: Հա-  
յաստանի ներքին ինքնավար դրութիւնը Վինչև Հաղկերտ Բ.  
(439—457), Սասանյան Իրանի վարած քաղաքականութիւնը հպա-  
տակ յերկրի նկատմամբ Հաղկերտ Բ-ի ժամանակ (439-457): Դասա-  
կարգային պայքարի նոր վերելք.—Մծղնեականների շարժումը 440-  
ական թվականներին: Այդ շարժումը վորպես Բորբորիտոնների  
շարժման յերկրորդ ետապը: Աշտիշատի ժողովը (443) և Մծղնեա-  
կան շարժման ճնշումը: Դենշապուհը Հայաստանում և նրա կա-  
տարած աշխարհագիրը: Արքունի հարկերի ծանրացումը: Նախա-

րարներն և հոգեորականների իրավունքների սահմանափակումը: Նախարարական պաշտոնների անցումը պարսիկների ձեռքը: Իրժգոհությունները Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում ընդդեմ Իրանի: Այդ յերկրների միացյալ ղեմադրությունը Սասանյան Պարսկաստանի պահանջներին: 449 թ. կրոնափոխության առաջարկը վորպես առիթ 451 թ. ապստամբության: 451 թ. ապստամբության նախապատրաստումը, Վասակն ու Վարդանը: Պայքարը ապստամբության շուրջ: 451 թ. ապստամբությունը, ապստամբության հետևանքները: Բյուզանդիոնի ղերքը ապստամբության նկատմամբ: Բուրժուական պատմագրության ապստամբությանը տված գնահատության քննադատությունը:

Սասանյան արքունիքի վարած խիստ քաղաքականության ժամանակավոր մեղմացումը ապստամբությունից հետո: Պերոզը (457—484) և նրա վարած նոր քաղաքականությունը: Հարկերի ծանրացումը, ղժգոհությունների խմորումը Հայաստանում և Վրաստանում: 481—484 թ. թ. վրացահայկական ապստամբությունը: Հայ-վրացահարկական միացյալ ֆրոնտն Իրանի դեմ: 481—484 թ. թ. ապստամբության վախճանը և Սասանյան Իրանի վարած քաղաքականության փոփոխումը: 481—484 թ. թ. ապստամբությունը, վորպես հայերի, վրացիների և աղվանական ժողովուրդների պայքարն իրենց անկախությունը վերահաստատելու համար: 484 թ. Նվարսակի դաշնագրությունը և նրա նշանակությունը հայկական ֆեոդալիզմի հետագա զարգացման համար:

Սասանյան Իրանը 5-րդ դարի վերջում և 6-րդ դարում: Սասանյան ղինաստիայի ճգնաժամը՝ Կավատ Ա-ի ժամանակ (488—531): Մազդակյան շարժումը և Սասանյան միապետությունը: Մազդակյան շարժման պատճառները: Իրանա-բյուզանդական կոնֆլիկտի առաջին շրջանը և 532 թ. դաշնագրությունը:

Արևմտյան Հայաստանը Յուստինյանոս կայսրի ժամանակ (527—565) Յուստինյանոսի ղեկավարմամբ և նրանց հետևանքները: Ապստամբությունները Արևմտյան Հայաստանում: Բյուզանդական մասի Հայաստանը վորպես պրովինցիա:

Մարզպանական Հայաստանը 6-րդ դարում: Պարսիկ մարզպանները Հայաստանում: Իրանի նոր փորձերը Հայաստանը տնտեսապես և կուլտուրապես անջատելու Արևմտյան աղբյուր:

թյունից: Իվինի յեկեղեցական ժողովները: Քաղքեղոնական դասականների մերժումը:

Իրանա-բյուզանդական պատերազմների 2-րդ շրջանը և 562 թ. դաշնագրությունը: Կավատի մացրած հողաչափության ղեկավարի ավարտումը Սոսրով Ա-ի (531—579) ժամանակ: Արքունի հարկերի շատացումը Հայաստանում: Իրամական հարկերի մոծոմն Իրանում և այդ հարկերի մոծման փորձերը Հայաստանում: 572 թ. ապստամբությունը Հայաստանում Սասանյան Պարսկաստանի տիրապետության դեմ, ապստամբության մասսայական բնույթը: 572 թ. ապստամբությունը վորպես փորձ Հայաստանը Սասանյան Իրանից ազատելու համար: Ապստամբության պարտությունը և պարտության պատճառները:


Իրանա-բյուզանդական պատերազմների 3-րդ և 4-րդ շրջանները: 591 և 628 թ. թ. դաշնագրությունները և Հայաստանի յերկրորդ բաժանումը Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև: Իրանա-բյուզանդական այդ կոնֆլիկտի քայքայիչ ազդեցությունը Մերձավոր Արևելքի տնտեսական կյանքի վրա:

Հայաստանի տնտեսական կյանքը մարզպանության շրջանում. առևտուրը, արհեստագործությունը: Իվինը վորպես մարզպանական Հայաստանի վարչական ու տնտեսական կենտրոն: Միջագային առևտուրը և նրա նշանակությունը Իվինի և Հայաստանի մյուս քաղաքների զարգացման համար: Քաղաքների զարգացման ղանդաղությունը: Ներքին առևտրի թուլությունը: Արհեստների տեսակները և նրանց զարգացման թուլ. աստիճանը:

Յերկրագործության մշակույթի զարգացման մակարդակը, ցածր տեխնիկա. յեռաղաշտային սիստեմը: Երևական դասի ղրությունը մարզպանական Հայաստանում, ձորտացման պրոցեսի ղժեղացումը: Աշխատավորական մասսաների տնտեսական ղրության վատթարացումը և ղահագործման խորացումը: Տեղական ֆեոդալների և արքունի հարկերը՝ հաս, սակ, բաժ, կոս, պտղի և բեզար: Արտաղբյուրի ղնտան իրրև ղահագործման յեղանակի տիրապետող ձևը: Բնատնտեսություն:

3. ԿՈՒՆՏԱՆԻՆՍԿԻ 5—7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայկական գրականության առաջացումն ու զարգացումը. մատենագրություն (Ագաթանգեղոս, Փավստոս Բյուզանդ, Կորյուն, Փարպեցի, Յեղիշե, Սորենացի, Սեբեոս): Կրոնական գրա-



կանություն.—Թարգմանչական (Աստվածաշունչ, Վոսկերերան և այլն) և ինքնուրույն՝ վարքարանական, ճառեր և այլն: Կրոնափիլիսոփայական գրականություն.—Յեզնիկ, Դավիթ Անհաղթ, Շարականներ: Ֆեոդալական իդեոլոգիայի գերիշխումը գրականության մեջ: Հունարան դպրոցը և նրա դերը հայկական լեզվի հարստացման գործում: Գրաբար լեզուն: Մարզպանական շրջանի պատմագրության նշանակությունը Հայաստանի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Ճարտարապետություն և նրա զարգացումը: Հուփսիմն ու Չվարթնոց յեկեղեցիները: Քաղաքացիական շենքերը: Ճարտարապետական փոխազդեցությունը հարևան յերկրների հետ:

Արվեստը.—հեթանոսական շրջանի գուսանական խմբերի և գողթան յերգերի աստիճանաբար նվազումը ու նրա փոխարեն շարականների հրապարակ գալը յեկեղեցիներում: Թատրոնական արվեստի վերացումը: Քանդակագործությունը և նրա հանդես գալը ճարտարապետության հետ միասին: Նկարչական արվեստը: Ժողովրդի պարարվեստը ու ստեղծագործությունը: Կրոնական գրականության բացասական ազդեցությունը հասարակական մտքի զարգացման վրա Հայաստանում:

## Բ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ (640—885)

1. Արաբական Խալիֆաթի առաջացումը 7-րդ դարում.—Արհեստների ու առևտրի զարգացումը Արաբիայում նախքան իսլամի առաջացումը, քարավանային ճանապարհները: Արաբական վաճառականությունը: Իսլամ և նրա ծագումը: Արաբական թափառաշրջիկ ցեղերի կոնսոլիդացիան: Արաբական խալիֆաթի կազմակերպումը: Հոգատիրության սխեման: Արաբական խալիֆաթի նվաճումները Մերձավոր Արևելքում (632—641) և հետագա նվաճումները Արևմուտքում: Արաբական աշխարհակալության հիմնումը: Արաբական աշխարհակալության պետական, զինվորական, վարչական ու տնտեսական կազմակերպվածության առանձնահատկությունները: Մահմեդականության տարածման տնտեսական հիմքերը: Արաբական կուլտուրան և նրա ազդեցությունը հայկական կուլտուրայի վրա հետագա շրջանում:

2. Հայաստանի նվաճումը.—Արաբների առաջին արշավանքները դեպի Հայաստան (640—642—43 և 650) արշավանքների ավարարության և գերավարական բնույթը: Արաբների հաստատումը Հայաստանում (650): Բյուզանդական կայսրության փորձերը Հայաստանը պահելու եր իշխանության տակ: Հայերի գաղթը դեպի Փոքր Ասիա: Խալիֆաթի և կայսրության պայքարը Հայաստանի շուրջ (640—655): Մուավիայի և Քեոզորոս Ռըշտունու միջև կնքած դաշնագրությունը (652): Այդ դաշնագրության քաղաքական նպատակները:

Հայաստանի Ոմանյանների տիրապետության շրջանում (650—750). Գրիգոր Մամիկոնյանի իբրև առաջին կառավարիչ արաբների կողմից (662—672): Արաբա-բյուզանդական կոնֆլիկտը 7-րդ դարի վերջում և Հայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից (698): Ոմանյանների ներքին և արտաքին քաղաքականությունը, արաբ վոստիկանները Հայաստանում, վոստիկանների պարտականությունները: Մովսես վորպես առաջին արաբ վոստիկան (698—700), սրա վարած քաղաքականությունը: Ծանր հարկերի գանձումը և նախարարների ձեռքակալումն ու քրուրը: Իրժ-գոնություններ Հայաստանում, ապստամբությունը Խալիֆաթի դեմ (703): Վարդանկերտի պատերազմը: 703 թ. ապստամբությունը վորպես փորձ արաբական գերիշխանությունից ազատվելու համար:

Կալմ վոստիկանը Հայաստանում, նախարարական զորքերի կոտորածը Նախիջևանում և Խրամում, Դվինի ավերումը: Արդյունազրիղը և նրա մեղմ քաղաքականությունը, փախստական հայերի վերադարձը: Հայ շահագործող դասակարգի մերձեցումը Խալիֆաթի հետ: Խալիֆաթի ֆինանսական ծանր դրությունը և հարկերի ծանրացումը Հայաստանում: Տեղական ֆեոդալների հարկերի շտապումը:

725 թ. Հերթի աշխարհագիրը և գլխահարկի գանձումը ժխտարկի փոխարեն: Աշխատավորական մասսաների նյութական դրության ծանրացումը: Դասակարգային պայքարի սրումը 720-ական թվականներին: Պալիկյան շարժումը, շարժման ղեկավարների քարոզած գաղափարները: Շարժումը վարպետ գյուղացիների պայքար: Գյուղացիական ապստամբությունները 726—727 թ.թ., ա-

պըստամբուեթյան պարտութիւնը: Արաբական խալիֆաթի քաղաքականութիւնը Պավլիկյան շարժման հանդեպ:

Ոմանյանների գինաստիայի ճգնաժամը. ապստամբութիւնները Սալիֆաթի ներսում: Ապստամբութիւնը Հայաստանում ընդդէմ Սալիֆաթի (747—751). շիաների ուժեղացումը և Ոմանյանների անկումը (750). Սալիֆաթի բաժանումը յերկու մասի՝ Արեւելյան և Արեւմտյան: Աբբասյան գինաստիան Արևելքում:

Հայաստանի տնտեսական կյանքի զարգացման անպատասխանները 7—8 դարերում: Հայաստանը վորպես Սալիֆաթի ռազմա-ստրատեգիական ֆորպոստ: Հայաստանի քաղաքները կորցնում են իրենց առևտրա-արհեստագործական նշանակութիւնը և վերածվում արաբական խալիֆաթի համար ռազմա-վարչական կենտրոնների: Յերկրի բնակչութիւնը նյութական դրութիւնը վատթարացումը. գյուղի շահագործման սաստկացումը՝ ներքին և արտաքին իշխողների կողմից: Ծանր հարկերը և բնակչութիւնը աղքատացումը:

Աբբասյան գինաստիայի ներքին և արտաքին քաղաքականութիւնն առաջին խալիֆների (Ա-Սաֆա 750-754. Ալ-Մանսուր 754—775, Ալ-Մահադի 775—786 և Հարուն-Ալ-Ռաշիդ 786—809) ժամանակ: Հայաստանի ապստամբութիւնը ճնշումը և արաբական կայսրուհիները Հայաստանում:

Սալիֆաթի խիստ քաղաքականութիւնը Հայաստանում Յեղիզ, Հասան և Բեքիր վոստիկանների ժամանակ: Ընդհանուր և մասնաշաղկապ խոր գեղեցկութիւնները Հայաստանում ընդդէմ Սալիֆաթի: 772—775 թ.թ. ապստամբութիւնը Հայաստանում: Արաբական զորքերի զուրս քշումը յերկրից. ապստամբութիւնը համաժողովրդական բնույթը: Այդ ապստամբութիւնը վորպես հայ ժողովրդի մղած պայքարը Սալիֆաթի դէմ իր քաղաքական պատասխանութիւնը ձեռք բերելու համար: Ապստամբութիւնը պարտութիւնը և Հայաստանի ավերվածութիւնը արաբական զորքերի կողմից:

Արաբական խալիֆաթի հարկային քաղաքականութիւնը, հարկերի գանձման ձևը. զրամական և հողային հարկերը: Սալիֆաթի վարած քաղաքականութիւնը Հայաստանի ռազմական ուժի թուլացման գործում: Սալիֆաթը և Բագրատունյաց նախարարութիւնը:

Արաբական խալիֆաթի քայքայման պրոցեսը 9-րդ դարի ընթացքում: Առանձին ֆեոդալների ուժեղացումը Սալիֆաթի սանձաճնշումը: Ապստամբութիւնները Սալիֆաթի դէմ (Իրանում). դասակարգային պայքարի սրումը Միջագետքում: Սալիֆաթի փորձերը վերականգնելու իր նախկին նորութիւնը: Ապստամբութիւնների ճնշումը և Արուսեթի պատժիչ արշավանքներն Ատրպատականում, Հայաստանում և Փոքր Ասիայում: Հարկային խիստ քաղաքականութիւնը կիրառումը հպատակ յերկրներում: Ասպատակութիւնները և զերավարութիւնը Հայաստանում: 349—52 թ. թ. ապստամբութիւնը Սասունում, Մըշում, Վասպուրականում և Հայաստանի այլ գավառներում: Ապստամբութիւնը ժողովրդական բնույթը: Խուժը վորպես ապստամբութիւնը կենտրոն: Այդ ապստամբութիւնը վորպես հիմք «Սանա ծոերը» վեպի: Բուղայի արշավանքը (852—853) և ապստամբութիւնը ճնշումը: Յերկրի ասպատակումը և բնակչութիւնը զերավարումը:

Աշոտ Բագրատունին Հայաստանի կառավարիչ (855) և «Իշխանաց իշխան» (859—885):

Սալիֆաթի համեմատաբար մեղմ քաղաքականութիւնը Հայաստանում 9-րդ դարի կեսերին: Հայաստանին քաղաքական ինքնուրույնութիւն տալու խնդիրը: Այդ ձևով Սալիֆաթը ձգտում էր Հայաստանը դարձնել վորպես պատնէշ ընդդէմ Բյուզանդիայի: Հայաստանի տնտեսական կյանքի աստիճանական աշխուժացումը 9-րդ դարի կեսերից սկսած: Առևտրական ճանապարհների աշխուժացումը. Բագրատից զուրս յեկած Հյուսիսային գծի անցումն Հայաստանի վրայով և նրա ազդեցութիւնը Հայաստանի քաղաքների զարգացման վրա: Կայսրուհիների, ամրոցների և գյուղաքաղաքների քաղաքային դրոցները: Քաղաքների զարգացումը և զարգացման ազդակները: Արտադրողական ուժերի աստիճանական զարգացումը:

### Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

#### 1. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԸՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ (885—1045)

Արաբական Սալիֆաթի ներքին քայքայումը, Բյուզանդական հաղթական արշավանքները և Սալիֆաթի թուլացումը: Աշոտ «Իշխանաց իշխանի» տիրապետութիւնը ամրապնդումը Հայաստանում:

տանուժ ստեղծված քաղաքական նպաստավոր պայմանների շը-  
նորհիվ և Հայաստանի ձգտումը քաղաքական անկախություն  
ձեռք բերելու համար: Բազրատունյաց թագավորության հիմնումն  
Աշոտ Ա-ի (885 թ.) ժամանակ: Նրա վարած ներքին և արտա-  
քին քաղաքականությունը: Ֆեոդալական ուժերի համախմբումը  
և բարեկամական հարաբերությունների հաստատումը հարևան յեր-  
կըրնների (Վրաստանի, Ալվանքի) հետ: Արհեստների անջատումը  
գյուղատնտեսությունից, քաղաքների առաջացումն ու զարգացու-  
մը, քաղաքները վորպես առևտրի և արվեստների կենտրոններ:  
Աշխատանքի բաժանումը քաղաքի և գյուղի միջև: Քաղաքային  
շուկայի առաջացումը և փոխանակության զարգացումը: Միջադ-  
գային առևտրական ճանապարհների աշխուժացումը Հայաստանուժ:  
Առևտրական ճանապարհների բացումը դեպի Բյուզանդիա:

Սմբատ Ա-ի (889—914) և Ատրպատահանի Աֆշին ու Յուսուֆ  
փոխարքաների պայքարը: Բազրատունյաց թագավորության  
ձգտումները Հայաստանն ամբողջությամբ իրենց յենթարկելու  
համար: Արժրունիների և Սյունյաց նախարարությունների դի-  
մադրությունները: Այդ հակամարտության ոգտադորժումը Յու-  
սուֆի կողմից: Արժրունյաց թագավորության հաստատումը Վաս-  
պուրականում (908), Յուսուֆի արշավանքները դեպի Հայաս-  
տան և յերկրի ավերումը:

## 2. ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Գյուղացիության նյութական ծանր վիճակը 10-րդ դարի  
սկիզբներին: Այդ ծանր դրությունը վորպես հետևանք ծանր հար-  
կերի և արտաքին ու ներքին կռիվների: Սմբատ Ջարեհավանեցին ու  
թոնդրակեցիների սկզբնավորումը: Եարժման ծավալումը 10-րդ  
դարի առաջին յերկու տասնամյակներում: Գյուղացիական աղքա-  
տամբությունը Արարատյան դաշտում և Սյունիքում: Ապստամ-  
բության շարժիչ ուժերը, ապստամբության պարտությունը և  
պարտության պատճառները:

## 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐՈՂՈՒՄԸ ՄԱՆՐ

### ԹԱՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. (10-ՐԴ ԴԱՐՈՒՄ)

Յուսուֆի նոր արշավանքները և Աշոտ 2-րդի համառ դի-  
մադրությունները.—Նրա ձգտումները ստեղծելու ուժեղ կենտո

րորաձիգ պետություն ընդդեմ Արարատյայ: Պարսկա-արաբական  
բանակի վերջնական պարտությունը և Հայաստանի հիմնական  
մասերի ազատագրումն արաբական ամիրայությունից: Բազրա-  
տունիների քաղաքական ձգտումների վորոշ խափանումը և նը-  
րանց ամփոփելն Արարատյան և Գուգարաց նահանգներում:

Աբրահամ (928—951) մղած պատերազմն արխաղների դեմ:  
Աշոտ Գ. (951—977) և Անին Բազրատունիների մայրաքաղաք:  
Կարսի թագավորության առաջացումը (968): Համեմատաբար  
խաղաղ ժամանակաշրջանը և տնտեսական կյանքի վերելքը: Շի-  
նարարական աշխատանքների ծավալումը, ճարտարապետական  
կառուցումները: Սյունյաց թագավորության հիմնումը (970)—Կա-  
պան մայրաքաղաքը: Սմբատ Բ. (977—990) և կառուցումնե-  
րը Անի քաղաքում: Կռիվները Կարսի թագավորության հետ:  
Բյուզանդիոնի առաջխաղացումն Անդրկովկասում: Հայաստանի  
և Վրաստանի միացյալ զիմազրությունը Բյուզանդիոնի դեմ:  
Կյուրիկյան թագավորության կազմակերպումը (988): Դա-  
գիկ Ա. (990—1020) և Անիի Շիրակյան Բազրատունյաց թագա-  
վորության ամրապնդման ջանքերը:

Հայաստանի տնտեսական կյանքի վերելքը 10—11-րդ դա-  
րերում: Գյուղատնտեսության զարգացումը, ջրանցքաշինարա-  
բությունը: Արհեստների զարգացումը, ներքին առև-  
ջացումը (Անի, Կարս, Դվին, Արժն, Կարին, Խլաթ, Մանազ-  
կերտ, Արձն, Բերկրի, Վան, Վոստան և այլն): Այս քաղաքների  
մեջ Անին, Կարսը, Խլաթը և Մանազկերտը, վորպես վաճառա-  
շահ քաղաքներ: Անի քաղաքի նոր կառուցումները Դագիկի ժա-  
մանակ: Վաշխառուական կապիտալի զարգացումը և հարստության  
կուտակումը քաղաքներում: Անի քաղաքի նկարագրությունը,  
վորպես միջնադարյան քաղաքի: Քաղաքային բնակչությունը,  
նրա դասակարգային կազմը, քաղաքային դասի առաջացումը,  
քաղաքների վարչաձևը: Քաղաքի և գյուղի միջև ստեղծված ներ-  
հակության ուժեղացումը: Քաղաքների պայքարը Ֆեոդալների  
դեմ: Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհները  
9—11-րդ դարերում, տրանզիտային առևտուրը: Հայաստանից  
արտահանվող և Հայաստան ներմուծվող ապրանքները:

Դասակարգային փոխարարներու թյունները 10—11-րդ դարերում.— իտշոր հողատիրութեան տիրապետումը. մանր հողատերերի ոստիճանական հողազրկումը: Գյուղացիութեան իրավաքաղաքական դրութիւնը.— նրա անձնական կախվածութեան խտացումը, շահագործման ուժեղացումը: Թոնդրակեցիները շարժման 2-րդ ետապը (990—1010), շարժման կենտրոնները, ծավալումը և նրա մասնայական բնույթը: Թոնդրակեցիների առաջադրած խնդիրները: Թոնդրակեցիների շարժումը վորպես գյուղացիութեան և քաղաքային դասի պայքարը ընդդէմ ֆեոդալներին: Շարժման ժամանակավոր պարտութիւնը:

#### 4. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

